«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Հայ-Ռուսական համալսարանի
գիտության գծով պրոռեկտոր
տ.գ.դ., պրոֆեսոր
Պ. Ա. Ավետիսյան
_____
«13 դեկտեմբերի» 2021թ.

ԿԱՐԾԻՔ

Դավիթ Ալեքսանի Հովհաննիսյանի «Մրցակցային միջավայրը և դրա կարգավորման ուղիները Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Ատենախոսությունը քննարկվել է Հայ-Ռուսական համալսարանի «Էկոնոմիկայի և ֆինանսների» ու «Տնտեսագիտության տեսության և անցումային շրջանի տնտեսության» հիմնախնդիրների ամբիոնների 2021 թվականի դեկտեմբերի 13-ի համատեղ նիստում (արձանագրություն թիվ 13-21):

Մասնակցում էին՝
Սանդոյան Էդվարդ Մարտինի՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ., **Ներսեսյան Կարեն Վասիլիի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Ոսկանյան Մարիամ Համբարձումի**՝ տնտեսագիտ. դոկտոր, դոցենտ, «Էկոնամիկայի և ֆինանսների» ամբիոնի վարիչ, **Զախոյան Էլիզա Միքայելի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Կարապետյան Էդգար Գագիկի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Պետրոսյան Իրինա Բորիսի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, «Տնտեսագիտության տեսության և անցումային շրջանի տնտեսության» ամբիոնի վարիչ, **Ավետիսյան Անի Գրիգորի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Մնացականյան Լիդա Արմենի**՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Հակոբյան Էսթեր Աշոտի**՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Հակոբյան Արմինե Արզումանի**՝ ավագ դասախոս, **Աղաջանյան Արմինե Վլադիմիրի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Գալստյան Անի Համլետի**՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Նաշիկյան Լիլիա Աշոտի**՝ դասախոս, **Պետրոսյան Հեղինե Գագիկի**՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Պետրոսյան Գարիկ Արմենակի**՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Կարապետյան Քրիստինե Գագիկի**՝

տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Տիգրանյան Վարսիկ Իշխանի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ապրանքային շուկաներում տնտեսվարող սուբյեկտների միջև բարեխիղճ մրցակցության առկայությունը շուկայական հարաբերությունների շարժիչ ուժն է: Հետևաբար, աշխարհում տնտեսության պետական կարգավորման կարևորագույն խնդիրներից մեկը երկրների համար մշտապես մնում է ազատ և բարեխիղճ մրցակցության ապահովման հարցը: Հայաստանի Հանրապետության տնտեսության կառուցվածքում ագրարային ոլորտի դերը պայմանավորված է երկրի համախառն ներքին արդյունքում բարձր տեսակարար կշռով, գյուղական համայնքների ամրապնդման, գյուղական բնակչության կենսապայմանների բարելավման, ինչպես նաև պետության պարենային անվտանգության հիմնախնդիրների լուծման առանձնահատուկ նշանակությամբ: Այս տեսանկյունից հետաքրքրական է հատկապես ագրոպարենային ոլորտի ապրանքային շուկաների ուսումնասիրությունն ու դրանում մրցակցային վիճակի գնահատումը:

Ընդհանուր առմամբ Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի ապրանքային շուկաները հանդիսանում են ցածր կենտրոնացված և մրցակցային: Որպես կանոն, այս ապրանքային շուկաներում չհիմնավորված գների կիրառումը պայմանավորված չի լինում շուկայական իշխանություն ունեցող տնտեսվարող սուբյեկտների վարքագծով, այլ հիմնականում դրանք ձևավորվում են ընկերությունների միջև կայացվող հակամրցակցային համաձայնությունների արդյունքում: Ընդ որում նման վարքագիծ դրսևորվում է ոչ միայն միևնույն ապրանքային շուկաներում, այլ նաև փոխկապակցված շուկաներում: Այնուամենայնիվ, ագրոպարենային ոլորտի ապրանքային շուկաներում երբեմն նկատվում են գնային փոփոխություններ, որոնք միշտ պետք է լինեն ուշադրության կենտրոնում և դիտարկվեն նաև մրցակցության օրենսդրության պահպանման տեսանկյունից: Ոլորտում հաճախ նկատվում է մասնակիցների

կառուցվածքի փոփոխություն՝ նոր ընկերությունների գործունեության ծավալում և մինչև անգամ խոշոր ընկերությունների շուկայից դուրս գալու երևույթներ: Այս առումով խիստ կարևոր է հասկանալ, թե մասնակիցների փոփոխությունը ինչ հանգամանքով է պայմանավորված, հետևաբար, այն պետք է դիտարկել նաև մրցակցության օրենսդրության տեսանկյունից:

Հայաստանի Հանրապետությունում բարեխիղճ մրցակցային միջավայրի ձևավորման և հակամենաշնորհային քաղաքականության իրականացման առումով, թերևս ամենախոցելի խնդիրներից մեկը հանրապետությունում վարվող ընդհանուր տնտեսական և մրցակցային քաղաքականությունների ոչ բավարար համակարգվածությունն ու ներդաշնակությունն է: Մրցակցային օրենսդրության կիրարկման արդյունավետության առումով լուրջ խնդիր է հանդիսանում շուկաներում գնագոյացման և ազատ մրցակցության իրականացման նկատմամբ վերահսկողության կիրառումը:

Ագրոպարենային ոլորտում մրցակցային իրավիճակի ապահովումը ակնհայտորեն ստանում է մեծ կարևորություն, քանի որ հակամրցակցային գործողությունների՝ գերիշխող դիրքի չարաշահումների, համակենտրոնացումների ձևավորման, անբարեխիղճ մրցակցության, հակամրցակցային համաձայնությունների և այլ դրսևորումների արդյունքում խեղաթյուրվում է ազատ մրցակցությունն ու հատկապես ոլորտում գնագոյացման ձևավորման բնական մեխանիզմը և լուրջ վնաս հասցնում ինչպես սպառողների շահերին, այնպես էլ մրցակիցներին:

Վերոհիշյալ հարցադրումների քննարկմանն ու որոշակի առաջարկությունների մշակմանն է նվիրված Ը. 00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Դավիթ Հովհաննիսյանի ատենախոսությունը: Ներկայացված հիմնախնդիրներով էլ պայմանավորված է թեմայի ընտրությունն ու արդիականությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակն է բացահայտել մրցակցային միջավայրի ապահովմանն ուղղված պետական կարգավորման առաջնային խնդիրները Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտում, մշակել բարեխիղճ մրցակցային միջավայրի բարելավմանն ու կիրարկվող քաղաքականության արդյունավետության բարձրացմանն ուղղված հայեցակարգային մոտեցումներ և առաջարկություններ:

Նպատակի իրագործման համար ատենախոսությունում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել տնտեսական մրցակցության հիմքերը շուկայական հարաբերություններում և հետազոտել մրցակցային միջավայրի ձևավորման պայմանները Հայաստանի Հանրապետության ագրոպարենային համակարգում,
- վերլուծել մրցակցության կարգավորման հիմքերը և զարգացման փուլերը Հայաստանի Հանրապետության ագրոպարենային համակարգում,
- ուսումնասիրել ագրոպարենային համակարգում մրցակցության պետական կարգավորման միջազգային փորձը,
- վերլուծել տնտեսական մրցակցության իրավիճակը Հայաստանի Հանրապետության ագրոպարենային համակարգի մի շարք ապրանքային շուկաներում և վերհանել մրցակցային առկա խնդիրները,
- վերլուծել Հայաստանի Հանրապետության մրցակցային միջավայրի կարգավորման օրենսդրական դաշտը և դրա ազդեցությունը ագրոպարենային համակարգում իրականացվող բարեփոխումների վրա,
- վերլուծել ագրոպարենային համակարգում տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականության արդյունավետությունը պայմանավորող գործոնները և ներկայացնել դրանց բարելավման ուղիները,
- մշակել Հայաստանի Հանրապետության ագրոպարենային համակարգում մրցակցային միջավայրի կարգավորման հայեցակարգային դրույթներ:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Ստացված արդյունքներն ունեն տեսամեթոդական և կիրառական նշանակություն, որոնցից գիտական նորույթն արտացոլող հիմնական դրույթները ներկայացված են ստորև:

- Ագրոպարենային համակարգում մրցակցային միջավայրի և տնտեսական մրցակցության պաշտպանության գործընթացի համակողմանի ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են տնտեսական մրցակցության պաշտպանության հիմնախնդիրները ՀՀ ագրոպարենային համակարգի ապրանքային շուկաներում, մշակվել են դրանց հաղթահարման ուղիները:
- Մշակվել են ագրոպարենային համակարգում տնտեսական մրցակցության պաշտպանության պետական լիազոր մարմնի լիազորությունների ընդլայնման և գործնական կիրառման կատարելագործման կառուցակարգեր:
- ՀՀ ագրոպարենային համակարգում սպառողների շահերի պաշտպանության նպատակով բացահայտվել են առկա հիմնախնդիրները, մշակվել են դրանց լուծման ուղիները:
- Մշակվել են ՀՀ ագրոպարենային համակարգում տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականության կատարելագործման ռազմավարական դրույթներ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունում իրականացված ուսումնասիրությունները և ներկայացված առաջարկություններն ունեն ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն:

ՀՀ ագրոպարենային համակարգում մրցակցության միջավայրի ապահովման քաղաքականության իրականացման, օրենսդրական բարեփոխումների և զարգացման ռազմավարական ուղիների մշակման նպատակով ատենախոսության մեջ ներկայացված առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության և ագրոպարենային համակարգի զարգացմանը շահակից ՀՀ

պետական լիազոր մարմինների օրենսդրական նախագծերի, ծրագրային փաստաթղթերի մշակմանը և ռազմավարության ու մարտավարության կատարելագործմանն ուղղված գործընթացներում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից: Նյութը շարադրված է 143 էջի վրա՝ ներառում է 15 գծանկար, 30 աղյուսակ և գրականության 80 աղբյուր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության ներածական մասում ներկայացվել են աշխատանքի նպատակն ու դրանից բխող խնդիրները, օբյեկտը և առարկան, հետազոտության մեթոդաբանական, տեսական և տեղեկատվական հիմքերը: Ձևակերպվել են ատենախոսության գիտական արդյունքները և նորույթը, ներկայացվել է աշխատանքի գործնական նշանակությունը, ինչպես նաև ատենախոսության կառուցվածքն ու ծավալը:

Ատենախոսության առաջին գլխում՝ **«Մրցակցային միջավայրի կարգավորման տեսական հիմքերը և մեթոդաբանությունը»,** վերլուծվել և ներկայացվել են «մրցակցային քաղաքականություն» հասկացության տեսամեթոդական հիմքերը, հետազոտվել են ագրոպարենային ոլորտում մրցակցային միջավայրի կարգավորման միջազգային փորձը, դրա ձևավորման պայմանները, մրցակցության ձևերն ու դրսևորումները, բացահայտվել են ազատ շուկայական հարաբերություններում մրցակցային միջավայրի և բարեխիղճ մրցակցության վրա բացասական ազդեցություն ունեցող գործոնները, գնահատվել են տնտեսական մրցակցության դերը ընդհանուր և մասնավորապես ագրոպարենային ոլորտի զարգացման գործում: Դիտարկվել են մրցակցային միջավայրի կարգավորման անհրաժեշտությունը ագրոպարենային ոլորտում՝ շուկայական տնտեսության պայմաններում, ինչպես նաև մրցակցության կարգավորման տեսական հիմքերը:

Ատենախոսության երկրորդ գլխում՝ **«Մրցակցային միջավայրի կարգավորման առանձնահատկությունները ՀՀ ագրոպարենային համակարգում»,** ուսումնասիրվել են մրցակցային հարաբերությունների ձևավորման և զարգացման առանձնահատկությունները ՀՀ ագրոպարենային ոլորտում, վերլուծությունների հիման վրա վեր են հանվել մրցակցային քաղաքականության կարգավորման առումով թույլ տրված բացթողումներն ու օրենսդրական վրիպումները, ինչպես նաև ոլորտում արդյունավետ մրցակցային միջավայրի ձևավորման խոչընդոտող գործոնները: Ուսումնասիրվել են ագրոպարենային ոլորտի մի շարք ապրանքային շուկաների մրցակցային իրավիճակն ու դրանցում մրցակցությանը խոչընդոտող հարցերը, ինչպես նաև մրցակցության կարգավորող պետական լիազոր մարմնի՝ ՀՀ ՄՊՀ իրավասությունների շրջանակն ու ագրոպարենային ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների մրցակցությունը սահմանափակող երևույթների հատկորոշման ու գնահատման, ինչպես նաև հետագայում դրանց կանխման հարցերը:

Ատենախոսության երրորդ գլխում՝ **«Մրցակցային միջավայրի կարգավորման կառուցակարգերի բարելավման հիմնական ուղիները ՀՀ ագրոպարենային համակարգում»**, կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա մշակվել են Հայաստանի ագրոպարենային ոլորտում տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրահիրավական և ինստիտուցիոնալ հիմքերի համալիրության մակարդակի բարձրացմանն ուղղված առաջարկություններ, պետական լիազոր մարմնի իրավասությունների ընդլայնման վերաբերյալ առաջարկություններ: Ուսումնասիրվել են ագրոպարենային ոլորտում մրցակցության պաշտպանության տեսանկյունից պետական օժանդակության և այդ առումով, ընդունվող իրավական ակտերի հիմնավորվածության աստիճանն ու մշակվել են առաջարկություններ դրա ապահովման համար: Մշակվել են ՀՀ ագրոպարենային ոլորտում մրցակցային միջավայրի բարելավման և տնտեսական մրցակցության պաշտպանության արդյունավետության բարձրացմանն ուղղված համալիր մոտեցումներ:

Ատենախոսության **«Եզրակացություն»** բաժնում շարադրվել են հետազոտության ուսումնասիրություններից և գնահատականներից բխող հիմնական եզրահանգումները և առաջարկությունները:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսությունում առկա են մի շարք թերություններ, որոնց մեջ կարևորում ենք առանձնացնել հետևյալները՝

1. Ատենախոսության գլուխների բաշխման մեջ առկա է բավականին մեծ անհամաչափություն՝ երկրորդ գլուխն իր ծավալով գրեթե երկու անգամ մեծ է առաջին և երրորդ գլուխներից:
2. Աշխատանքը զգալիորեն կշահեր, եթե հեղինակը հայրենական և ռուսաստանյան հեղինակների աշխատություններից բացի, ավելի շատ ուսումնասիրեր արտասահմանյան հեղինակների աշխատությունները և վերլուծությունները թեմայի վերաբերյալ:
3. Երկրորդ գլխի 2.2 կետում հեղինակը ներկայացնում է աղյուսակներ /օր. Աղյուսակ 2.2.25, 2.2.26/, որոնք կազմված են հեղինակի կողմից սեփական ուսումնասիրությունների և հարցումների տվյալների հիման վրա: Սակայն, «Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը» բաժնում ներկայացված չէ այդ հաշվարկների և հարցումների մեթոդաբանությունը:
4. Հստակ սահմանված և առանձնացված չեն առաջարկությունները՝ դրանք ընդհանրացված նախադասություններով նեկրայացված են «Եզրակացություններ» բաժնում:
5. Գրականության ցանկում և հղումներում տեղ գտած էլեկտրոնային ռեսուրսները թվարկելիս հեղինկաը չի նշում կայքերի հստակ անվանումները, այլ նշում է միայն դրանց հղումները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները չեն նվազեցնում հետազոտության արդյունքների տեսական և կիրառական նշանակությունը:

Դավիթ Ալեքսանի Հովհաննիսյանի «Մրցակցային միջավայրը և դրա կարգավորման ուղիները Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը ինքնուրույն և ամբողջական հետազոտություն է, որում դրված նպատակը և խնդիրների լուծումը ագրոպարենային ոլորտում բարեխիղճ մրցակցության ապահովման արդյունավետ քաղաքականության մշակման և իրականացման համատ շատ կարևոր են և անհրաժեշտ:

Հեղինակի կողմից կատարվել է լուրջ, ծավալուն և որակյալ աշխատանք, ուսումնասիրված և վերամշակված են մեծ քանակով տեսական և կիրառական աշխատություններ ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ:

Առանձին հարկավոր է նշել այն, որ հեղինակի կողմից ուսումնասիրվել և վերլուծվել են ագրոպարենային ոլորտի մի շարք ապրանքային շուկաներ, հեղինակը տիրապետում է ոլորտում մրցակցության ապահովման առանձնահատկություններին ու խնդիրներին, տիրապետում է վիճակագրական տվյալների հետ գրագետ աշխատանքի ու շուկայի գնահատման տարբեր մեթոդների կիրառման և դրանց արդյունքների մեկնաբանման հմտությունների, ինչը և ավելի է արժևորում ներկայացված ատենախոսությունը:

Կատարված աշխատանքն արժևորվում է հատկապես այն փաստով, որ ատենախոսության շրջանակներում իրականացված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում (ընդունվել է 06.11.200թ. ՀՕ-112, լրամշակված, փոփոխված և խմբագրված 23.03.2018թ. ՀՕ-249-Ն) բացահայտվել են նաև խնդիրներ, որոնց լուծման վերաբերյալ առաջարկները 2020 թվականի սեպտեմբերին ներկայացվել են ՀՀ ՄՊՀ և ներառվել են օրենսդրական փոփոխությունների փաթեթում և ընդունվել ԱԺ-ի կողմից:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակվել են 12 գիտական հոդվածներում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևոր դրույթներն ու արդյունքները:

Հեղինակի կողմից մշակված առաջարկություններն ու կատարած եզրահանգումները, մասնավորապես՝ ՀՀ ագրոպարենային համակարգում մրցակցության միջավայրի ապահովման քաղաքականության իրականացման, օրենսդրական բարեփոխումների և զարգացման ռազմավարական ուղիների մշակման նպատակով ատենախոսության մեջ ներկայացված առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ

տնտեսական մրցակցության պաշտպանության և ագրոպարենային համակարգի զարգացմանը շահակից ՀՀ պետական լիազոր մարմինների օրենսդրական նախագծերի, ծրագրային փաստաթղթերի մշակմանը և ռազմավարության ու մարտավարության կատարելագործմանն ուղղված գործընթացներում:

Այսպիսով, Դավիթ Ալեքսանի հովհաննիսյանի **«Մրցակցային միջավայրը և դրա կարգավորման ուղիները Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտում»** թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ներկայացված Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Նիստի նախագահ՝
Հայ-Ռուսական համալսարանի
էկոնոմիկայի և ֆինանսների պրոֆեսոր,
տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ **Է. Մ. Սանդոյան**

Հայ-Ռուսական համալսարանի
էկոնոմիկայի և ֆինանսների ամբիոնի վարիչ,
տնտ. գիտ. դոկտոր, դոցենտ՝ **Մ. Հ. Ոսկանյան**

Հայ-Ռուսական համալսարանի
տնտեսագիտության տեսության
և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների
ամբիոնի վարիչ, տնտ. գիտ. թեկնածու՝ **Ի. Բ. Պետրոսյան**

Հայ-Ռուսական համալսարանի
տնտեսագիտության և բիզնեսի մեջ
մաթեմատիկական մեթոդների և
տեղեկատվական տեխնոլոգիաների
ամբիոնի վարիչ, տնտ. գիտ. թեկնածու՝ **Ա.Գ. Ավետիսյան**

Հայ-Ռուսական համալսարանի
գիտական քարտուղար,
բան. գիտ. թեկնածու՝ **Ռ. Ս. Կասաբաբովա**